


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչտային համար	12 ժր.
արհեստի վեցամսեայ	6 "
Արտասահմանի համար արհեստի վեցամսեայ	15 "
վեցամսեայ	8 "
Անտրիկայի համար արհեստի	3 ժր.
վեցամսեայ	1.50 "

Մանուկան տղր ասու ջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. երեսին մեկի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ:

Վառագի համար մ. ղ. 10 սանթիմ



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՂՄՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐՏՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

ՇԱՐՄԻՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՐ Է ԿԱՆԽԻԿ ՎԱՍՐԷ

Նամակ և գրամ գրկի խմբագրութեան հասցին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Yarna (Bulgarie)

արկարիոյ համար մ. ղ. 15 ՍՍՆԹԻՄ

Արտասահմանի համար մ. ղ. 20 ՍՍՆԹԻՄ

Գրութիւնք և շեք տրուիր

ՊԵՏՐ Է ՊԱՅԱՆՁԵԼ

—)o(—

Կոտորածներ, կոտորածներ ու կոտորածներ... Ապրիլից մինչեւ այժմ հայրենիքից եկած լուրերը այդ է. Սասուն, Մուշ, Մշոյ գաշտ, Ուշ-քիլիսէ, Վան և այժմ էլ Նարեկ:

Մի ժամանակ թիւրքը՝ քաշուելուց էր, վախից էր ուրանում էր կատարած սպանութիւնները. իսկ այժմ՝ երեւի եւրոպական մի ու եւ պետութեան պաշտպանութիւնը զգալով՝ ցիւնիքաբար հաստատում է Նարեկի կոտորածը, մեղադրելով ի հարկէ եւ լի հայերին, որոնք համարձակել են մի ժանդարմի, հաւանականաբար նորա լրբութիւնների պատճառով վիրաւորել...

Իսկ մեր հաշակաւոր ճիւղերը, Պոլսի պատրիարքը, թող փշելու համար կոտորուող և բողոքող ժողովրդի աչքերին՝ ամեն մի կոտորածի լուրը առնելուն պէս վազում է Երլտրղ սուլթանին աղաչելու, որ վերջ տրւին «այնտեղի կառավարութեան այդ տեսակ գործողութիւններին»:

Ինք կարծում էք այդ պատրիարք կոչւածը նախօրէն չգիտե՞, թէ սուլթանը ինչ պէտք է պատասխանի իրան. Եթէ մենք բոլորս գիտենք՝ նա էլ անշուշտ կը գիտե՞նայ. Բայց նա գրանից աւելի քայլ չէ անում, որովհետեւ այդ քայլը պատճառ կը լինի իւր փառքերով և քեֆերով վերկանքի խանդարման:

Ամենայն հայոց կաթողիկոսը անուէ այնքան, որքան չէինք սպասում նորանից. յեղափոխականները նոյնպէս. Ժողովուրդը կառում է, դիմադրում է, բողոքում է, կոտորում է... Անգործ նստածը միայն այդ պատրիարք կոչւածն է, կոտորուող ժողովրդի ներկայացուցիչը, որ իրան միակ զորք է շինել գնալ պալատ և այնտեղից վերադառնալ ու աղթել գազանի երկարակեցութեան համար, կարծես սրտանց ցանկանում է նորա կեանքի եր-


կարումը այնքան, որքան հարկաւոր է իրա հանգստութիւնը վրդովող ժողովրդի շնչմանը, որպէսզի ինքը խաղաղ սրտով կարողանայ մասնակցել Պոլսի հանգէաներին և քեֆերին:

Բաւական է համբերել կարծում ենք. երկրի բողոքները չեն ազդում ճիւղերի վրայ. «Հայրենիք»-ը առաջարկում արտասահմանի հայութեան ճնշում գործ դնել:

Մենք էլ մեր ձայնը միացնելով նորա հետ, առաջարկում ենք կազմել բողոքագրեր՝ բազմութիւ ստորագրութիւններով, պահանջել վերջ այդ ցիւնիք գրութեան և հետեւել իւր նախորդին՝ Իզմիրլեանին, և կամ հրաժարւել: Նոյն տեսակ ստորագրութիւններով դիմել և ամենայն հայոց կաթողիկոսին և խնդրել նորանից, որ իբր հովապետ, նա էլ իւր կողմից գործ դնի իւր ազդեցութիւնը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԻՒՆԸ

«ՍՊԻՏԱԿ ՏԱՆ» ՄԵՋ



Ռուզվելի Նախագահը այսօր (15/28 սեպտ.) ընդունեց հայ կաթողիկոսական պատգամաւորութիւնը, որը կը բաղկանար Սարգսեան և Ալվատեան եպիսկոպոսներէն և բժիշկ Յովհաննէս Լորիս Մեղիբովէ, իբր ներկայացուցիչներ Լ. Եկեղեցւոյ կաթողիկոսին:

Այս այցելութեան նպատակն էր Միացեալ նահանգաց կառավարութեան համակրանքն ու պաշտպանութիւնը հրաւիրել թուրքիոյ հայերուն վրայ, որոնք տառապանքի ու մահուան վտանգներուն ենթարկուած են:

Պատգամաւորութեան անդամները ներկայացուցան ձէյմս Պրոսուրն Ռեյնօի միջոցաւ: Անոնք նախագահին յանձնեցին նամակ մը, որով հայ ժողովրդ-

դին շնորհակալութիւնը կը յայտնէին ամերիկեան հասարակութեան կողմէ ջարդերէն ազատուածներուն զրկուած նպատանքն ուն համար:

Պատգամաւորութիւնը նախագահին ներկայացնելու միջոցին Պ. Ռեյնօ հետեւեալը բանախօսեց.

«Ձեզի ներկայացնելով կաթողիկոսին նամակն ու զայն բերող պատգամաւորութիւնը, կը խնդրեմ որ բարեհաճեք վերջիջել իրողութիւն մը, որ ծանօթ է ձեզ անշուշտ. կաթողիկոսը ամբողջ աշխարհի մէջ ամենէն աւելի աւանակաւորէն ընտրուած եկեղեցականն է: Ամէն հասուն տարիքի հայ քուէ տալու իրաւունք ունի, և իր ընտրութիւնը անպատճառ կղերականի մը վրայ կ'ստարելու հարկագրուած չէ:

Հայ ժողովրդին սլքալի կացութիւնը ամէն նկարագրութեանէ դուրս է: 1895էն ի վեր աւելի շատ թուով մարդ, կին ու տղայ սպանուեցան այս դժբաղդ երկրին մէջ թուրք զօրքերէն ու անոնց օգնականներէն, որքան չէին սպաննուած Ֆրանսե-Ռուսական արխիւալի պատերազմներու միջոցին, ու այս ընթացիկ գործնան, շատ աւելի հայեր ջարդուեցան, քան թէ ներկայ Ռուս ճարտնական կառոյն մէջ, Լիւստանկի կռիւր չի հաշուելով, Ձենք կարծեք որ քրիստոնէութեան պատմութիւնը կարենայ ներկայացնել մեզ ուրիշ օրինակ մըն ալ պաղարիւնութեամբ հատարուած ասանկ մարդասպանութեան, սպաննութիւն անգէն ժողովրդի մը, որ ոչ պատերազմով և ոչ ալ ապստամբսլի դիրք ստանձնած է:

Ու այս իրողութիւնները այնպիսի կատարելութեամբ խեղդուեցան, որ մինչդեռ բոլոր երկիրներու թերթերը կողքային մարդկային կեանքի բոլորուտը Ռուս ճարտնական կառոյն մէջ, հազիւ թէ երկտող մը կ'երեւար հայկական ջարդերու վերաբերեալ, և հաւանականաբար մեր հա-

սարակութեան մեծամասնութիւնը այնպէս կերեւակայէ, թէ եղածը լոկ քանի մը տաք արիւն անձերէ կազմակերպուած աննշան ընդվզում մըն էր:

Վերջին ջարդերը հայերու մտքին մէջ այն երկիւղը յարուցին, որ թուրք կառավարութիւնը լրջօրէն մտադրած է հայ ժողովուրդը ամբողջովին բնաջինջընել: Ուստի կոչում կ'ընեն քաղաքակիրթ մարդկութեան, որպէսզի հեռացնեն սպաննացող վտանգը: Կաղաչեն ձեզի, ձեզ և ամերիկեան ժողովրդին, որ բողոքեք այս ատորինակ ոճրին դէմ, յուսահատ ցեղի մը դէմ կատարուած: Ձեն ուզեք հաւատալ որ սպառնութեան սիրահար ամերիկացիները իրենց կոչին խուլ պիտի մնան: Եւ ձեզի կը ներկայացնեն կաթողիկոսին նամակը ու վստահ են որ ձեր լուրջ և ուշադիր նկատառութեան առարկայ պիտի դառնայ:

Անոնք կը բազման նաեւ արտայայտել իրենց խորին երախտագիտութիւնը Պմերիկայի մէջ, այս վերջին տարիներս կատարուած առատ հանգանակութեանց համար, ջարդերէն զերծ մնացածներուն օգնութեան հասնելու նպատակաւ: Միեւնոյն ատեն ջերմագիրներէն շնորհագրտար կը մընան ձեզ, որ իրենց առիթը տրուիք ամերիկեան ազգին հանդէպ ունեցած երախտագիտական այս պարտքը կատարելու, և անոր հրաւեր կարդալու ձեր միջոցաւ, որպէսզի շարունակեն աւելի լայնօրէն հետաքրքրուիլ Հայաստանի վիճակով:

Սպիտակ Ցան այցելութեանէն ետքը, պատգամաւորութիւնը պետական պաշտօնատուն գնաց, ուր ընդունուեցաւ քարտուղար Լուսմիսէն:

Պատգամաւորութեան անդամները խիստ գոհ մնացած են իրենց վաշինկթըն այցելութեանէն: Նախագահ Ռուզվելի շատ համակրելի ընդունելութիւն մը բրած է իրենց և իր համակրութիւնը յայտնած է հայ ժողովրդ-

գին տառապանքներուն հանդէպ Սակայն չէ յայտնած թէ ինչ գործողութիւն պիտի ձեռք առնէ, եթէ երբէք ո՛ր է գործողութիւն ձեռք պիտի առնէ :

(Բրո Արմենիա)

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՄ

Պօլէն կը հեռագրեն բուլղարական Վեչերնա Քոչթա թերթին հոկտեմբերի 8 թուով :

Քաջաստանէն հասած վերջին հեռագրերը կը հաղորդեն թէ Վաեն մի քանի ժամ հեռառութեամբ նարեկ ըստած տեղում քանի մը օր առաջ նոր ստակալի շարք մը տեղի ունեցած է :

Մէկ թուրքաց զօրաբաժին, ինչպէս ուրիշ անդամներ նոյնպէս և այս անգամ, բաւական թուով քիւրտերու հետ զէպի նարեկ գիւղը ուղեւորած է, Սասունի Անդրանիկի խումբին մնացորդները երեւան հանելու համար : Թուրքերը իրենց յատուկ և վրդովեցուցիչ խտտարտութեամբ ամենամանրազննին կերպիւ խուզարկեցին : Խեղճ գիւղացիները փորձեցին գիմարել նոցա գազանութիւններին, սակայն իրենց սուղի նըստաւ : Բիւրտերը, աւելի զրզռուած հայերի աղաչանքներէն— խնայել իրենց ստացւածքը, որ քիւրտերը արդէն սկսած էին թալանել— գործուցին հրացաններէ բերանները ու սուրբընոցա գէմն անխնայ կերպիւ կտորեցին գիւղի գրեթէ բոլոր բնակիչները, մարդկանց, կանանց և երեխաներին, թուով մի քանի հարիւր : Յետոյ գիւղը կրակի տալին և հրդեհը մոխիր դարձուց 20ի շափ տուններ հոյ ճարակ ընելով շատ մը հայեր :

Թիւրք զինուորները պարզ հանգիստեաններ եղան, առանց միջամտելու արգիլելու կոտորածը : Ընդհակառակը կը պատմուի թէ իրենք ալ մասնակցած են կոտորածին :

Հոս թուրքերը չեն ուրանար այս եղելութիւնը : Ներմապէս կը պնդեն՝ առարկելով թէ այս խիստ և կոտուկ միջոցին գիմելու պատճառը հայերի մի թուրք ժամտարմի վիրաւորելն է, և հիմայ կը ջանան եղած գաղանթութիւններու չափը պակաս ցոյց տալ, պնդելով թէ միմիայն քանի մը տուն այրւած են և քանի մը գիւղացիներ պատժուած :

Հայերու Սոյ կաթնղիկոսը, որ տեղս կը գտնուի, Պոլսոյ պատրիարքին հետ միատեղ երեկ երեկոյ պալատ գացին սուլթանին գանդատելու այս գազանութեանց համար նորա սեկրետարի միջոցաւ և աղաչելու որ այլեւս վերջ

գրուին այս գաղանթին սպանութեանց : Սուլթանը խոստացած է մեղաւորները պատժել... Թող սպասեն...

ՏԱՐՈՒՑԻՆԵՐՈՒ ԲՈՂՈՒՄՆԵՐԸ

Սեպտ. 13 1904

Կանխաւ աւած խոստումն համաձայն, «Հայրենիք» ընթերցողներուն կը ներկայացնեն երկու կարեւոր տօքիւմաններէ քաղածները, որը տարօնցիք ուղղած են պատրիարքարան, իրենց վիճակին համար հիմնական բարւոքումի մը անխուսափելիութիւնը շնչաւուր նպատակով : Առաջին տօքիւմանը որ կը կրէ յունիս 9—04 թւականը, կը բացատրէ թէ ինչպէս Բաղէշի նորընտիր կուսակալը Ֆէրիդ պէյ և Մշոյ զինւորական հրամանատար Սալեհ բաշա, յեղափոխականներու հետ բանակցութեան ոճեական հարցեաց գործողութիւն» մը լոկ կատարեցին ու սխալելով խաղաղաբարկան ամէն յարաբերութիւն ապրիլ 10—23ին թնդանթներով խուճեցին Սասուն : Ապա համառօտեցէ ետք Սասունի և Մշու զաշտի մէջ կատարած բոլոր գազանութիւնները, պաշտօնագիրը կը յարէ :

Եւ Մենք մեր տխուր օրհասական մէջ հազիւ միջոց կը գտնենք այս տառապանաց գիրը ձեզի ուղղելու, ձեր ուշադրութիւնը հայցելու, որ հնարաւոր միջոցներ անմիջապէս ձեռք առնել հաճէք, որ որ անկէ ամէն ազգու գիմումներ ընել իկարգադրութիւն հայ ժողովրդի կենսական և ամենամանրազննող պահանջներուն, այսինքն ձեռք բերել ծրագրուած և առաջարկուած կատարելու ու գործուցիչ բարենորոգումներու, խոստացւած, այլ զիջուած գործողութիւնը հաստատուն ու տեւական ապահովութեամբ երաշխաւորած ըլլալու պայմանով հայկական դաւառներու և մասնաւորապէս Տարսնոյ և Սասնոյ հայ ժողովրդի բանարեւած իրաւունքները, կեանքը, պատիւը, ստացւածքը : Երբէք ալ չենք ու չի պիտի հանդուրժենք խաբարի երեւակայական յուսադրութիւններով՝ խաբուսիկ միջոցներով կամ այսքան արիւնեղեղութեան հեղինակ անխիղճ ու աշխարհաւեր պաշտօնեաներու, շարագործ և արիւնածարալ քերտ աշխարհներու, պետերու կամ այլ պարագայից դատապարտութեամբ միայն : Յայտարարած ենք ու ընդ միշտ կը յայտարարենք, թէ այլեւս անկարելի է հայ ժողովրդեան համար այս կողմերը ապրիլ, եթէ եւրոպական մեծ տէրութեանց պայմանագրական երաշխաւորութեանց ներքեւ կատարելու և անմիջական բարենորոգումներով հանրային ապահովութիւնը չընտրուի : Աւելորդ կը համարենք երկարաբանութեամբ ապացոյցներ շարել հաստատելու համար թէ հայ ժողովրդի գոյութիւնը գաւառներու մէջ բացարձակ վտանգի ներքեւ է, թէ հայութիւնը դատապարտուած է միշտ օրերը համրել, իր գերեզմանը փորել : Արդարեւ կը համարինք իսպառնալու ջնջել, քան այս մնայուն և անտանելի տառապանքներու մէջ արագաբար հիւծել և ոչնչանալ : Մի կարծեք, սրբազան հայր, թէ մեր այս տառապանքները վաղանցիկ ու ժամանակաւոր տանա

ջանքներ են. ամենեւին, այլ կազմակերպելու շարժարանքներ զմեզ ջնջելու սահմանուած : Այս դան ճշմարտութեան ո՛չ միայն վկայ են եւրոպական մեծ տէրութեանց Մշու մէջ գտնուած ներկայացուցիչներ, այլ բովանդակ աշխարհն ալ համոզուած է : Մերիւ մեր հոգեւոր բարձրագոյն պետին՝ ձեր ազգայնամ սրբազնութեան և ազգ. կեդր. պատրք. վարչութեան կը զիմենք ու կողաջենք, լսելով մեր օրհասական ձայնին հաճիք՝ ոգի իձեռնին՝ ջանահար ըլլալ ու որ անկէ փութանակի ներմուծել սուր փափաքուած ու խնդրուած բարենորոգումները, վերջ դրելու համար ահա որ այս շարժաց : Եթէ ոչ, կը պաղատենք, խնդրեցէք մեզ համար կամ ընդհանուր սրածութիւն կամ սարաշխարհ գաղթելու ճամբայ մը » :

Սոյն գրութեան կցած ուրիշ պաշտօնագիր մը, յունիս 20 թւակիր, հետեւեալ կորպով կը յանձնարարէ ու կը լուսարանէ առաջինը :

Ամենապատեալ Սրբազան Հայր և Պատկառելի Տիարք Ազգ. կեդր. վարչութեան նախն ժողովոյ 4. Պօլիս.

«... Կր փութանք յայտարարել թէ արդարեւ հայ ժողովրդի կեանք այլեւս անտանելի է արդի քայքայիչ գրութեան ներքեւ : Եւ այն բոլոր շարժումներն ու յուսահատական ճիգերը հայ ժողովրդի կողմէ ո՛չ թէ ընդպատակ ունին ճաճկատանէն հողային անջատումի կամ ուրիշ տարրերու վրայ գերիշխանութեան, այլ կատարելաբար բարենորոգումներու իրագործումով ապահովել իրենց բնաբարւած իրաւունքները, ազատել ստրկական ու շլատող այդ վիճակէն : Կատարելապէս հաւասար նկատելով ուրիշներու : Ահա այս արդարացի ու պարկեշտ ձգտումները կարելի պիտի ըլլան երբ բարենորոգումներ ի գործ դրուին տուրքերու գրութեան վրայ, զինտրական տուրքերու ջնջումով տեղի ունենայ միջկիսայի և զիւղական պահպաններու հաստատութիւնը, իսլամական տարրերու զինաթափութիւն կամ քրիստոնեաներու անարգելք գէնք կրելու արտօնութիւն : Դատաստանական գրութեան ընդհանուր բարեփոխում, վերագրումն հայերէ գրուած այն ամէն տեսակ հողային կալուածներու, որոնք այսօր իսլամներու ձեռք կը գտնուին յամրուսակութեամբ, ազատ արտօնութիւն անցազրի, տեղափոխութեան և վաճառականութեան, անկախանք թոյլտուութիւն դաւանանքներու, եկեղեցիներու և դպրոցներու, ազատ վերադարձ բոլոր պանդուխտներու և գաղթականներու, անխտիր արձակում ամէն քաղաքական բանտարկեալներու, արգիլում բոլոր վրանաբնակ քերտներու հայոց սահմաններու մէջ ամաբանոց իջնելու, ջնջումն քերտ հեծելազօրաց քայքայիչ դրութեան և վերջապէս եւրոպական մեծ տէրութեանց երաշխաւորութեան և հսկողութեան ներքեւ հայկական նահանգներու համար քրիստոնեայ ընդհանուր կառավարչապետի մը անուանումը : Առանց այդպիսի բարենորոգումներու, ինչպէս Ձեր Բարձր Սրբազնութեան և սոյն յայտնի է, անկարելի է որ հայ ժողովրդը կարենայ շարունակել իր գոյութիւնը : Այս առաջադրութեամբ չի կրնար դադարել իր արդար պահանջումներն ընդել, հակառակ պարագային լաւ ազոյն կը համարի մեռնիլ կամ գաղթել հեռու անալ »

«Հայրենիք»

ԱՆԴՆԵՐԱՆՆԵՐԻ ՊՈՒՅՏԱԿ ԳԻՐԳՐ

ՅԵՏՅԵՍ

Երեսփոխանաց և լորտերու ժողովներու եղած խոստման համաձայն, Սպիտակ Գիրք մը հրատարակուեցաւ անգլ. կառավարութեան կողմէ : Վաւերաթղթերու այն կարեւոր հաւաքածոն կը պարունակէ թուրքից և սիւրիական գաւառներուն վերաբերեալ թղթակցութիւնները, 1903 հոկտ. 16-էն մինչեւ 1904 օգոստոս 16, ընդամէնը 106 նամակներ և լեռագրեր, բազմաթիւ յաւելումներով :

Անկարելի է այժմէն մանրամասնութեանց մէջ մտնել և բաղադրական պաշտօնական տեղեկութիւններ մասնաւոր ազդեցիկ արտած լորտերու հետ : Բայց առաջին ընթերցումին թողած տպաւորութիւնը պատուար չէ եւրոպական հիւանդախոթեան համար, որ զէպերը կանխաւ տեսած է, առանց անջեւր առնել կարենալու : Յանցանքը պէտք է վերագրել տեղական ներկայացուցիչներուն, այլ նոյնիսկ պետութիւններուն, որոնք անգամ մըն ալ ուզած են խաբուիլ Սուլթանին ու անոր պաշտօնեաներէն : Գիտաւորութիւններ ամենաընտիր եղած են, վտանգին նախատեսումը խիստ յստակ, բայց գործիք այն չեն եղած, ինչ որ պէտք էր որ ըլլային, սակայն :

1903 հոկտեմբերէն սկսեալ, անգլիական հիւպատոս Համբըրն կը տեղեկացնէր թէ Սասունի յեղափոխականներուն զէմ գիմուորական միջոցներ ձեռք առնուած են, բայց կաւեցիներ որ արդէն եղանակը շատ յատկացած ըլլալով, ձեւեր, այդ գաւառներուն մեծագոյն խաղաղաբար, կը մտնանար :

Հակառակ Տէլի Պապայի գործի, ձեւեր իրացնէ առանց կրօնորդէպի անյաւ : Բայց անգլիական դեսպանը յունիս 26-ի հիւպատոսական հեռագրով մը կը տեղեկանար թէ «ըստ ամենէն վստահելի լուրերու, օրոյում է Սասունի ֆէտայիներուն վրայ յարձակիլ, ձիւները հաղել սկսածին պէս, այսինքն մայիսի մէջ տեղերը : Սըր Նիքոլա Օ'քոնոր իսկոյն տեսակցութիւն ունեցաւ Միւնսթրաքսին հետ, որուն խրատաց ծայրագոյն խոնձորութեամբ միայն գիմուորական ուժը գործածել օրպէս զի քիւրտերու շահատակութեանց դուռ չի բացուի : Եւ պարբոսն ու Սուլթանը, կը հասկցուի անուշտ, որ լաւագոյն ապահովութիւնները կուտան, կըսեն թէ քաղաքային պաշտօնեաները զօրքերուն պիտի ընկերանան և բոլոր անցած դարձածներուն արձանագրութիւնը պիտի կարգեն :

Անգլ. դեսպանը չէր ուզեր հաստատալ սակայն և Սուլթանին ներկայանալով, մարտ 14-ին, անոր կը թելադրէր Սասունի պետերուն հետ բանակցութեան մտնել և ընդհանրութեան շեղումներէ, Համբըն կը պատասխանէր գեւառային որ ձիւն ինքն ալ նոյնը մտածած էր : Օ'քոնոր կաւելցնէր :

«Մտածեցի թելադրել որ ն. վ. Պիթիլիսի փոխ-հիւպատոսը կրնար իր բոլոր միջոցը ծառայել : Բայց խնդիրը ձեր հաւանութեան ներկայացնել տալ չուզեցի այդ քայլն առնել, որպէս զի հասկնամ թէ ընդունելութեան պարագային որս կառավարութիւնը միջեւ որ աստիճան պիտի գործակցէր մեզի : »

Այս ունկնդրութիւնը մարտ 14-ին կը լար, 15-ին Սուլթանը իր ծրագրե

ը կազմած է արդէն. պէտք էր ամէն  
գնով խոյս տալ եւրոպական միջնորդի  
մը միջամտութիւնէն. պէտք էր պա-  
լատ կանչել Օրմանեան պատրիարքը  
և հրաւիրել զայն, որ Մուշէի իր ստա-  
րազատեալներուն հրամայէ ապստամբ  
ներուն հետ բանակցութեան մտնե-  
լու:

Պատրիարքը թելադրեց որ պաշ-  
տօնեայ մը իր պատգամաւորներուն  
ընկերանայ բանակցութեան միջոցին,  
որպէս զի հասկցուի, որ կառավարու-  
թեան թաշտուութեամբ եղած է,  
բայց այս առաջարկը իր բաց ձգուեցաւ:  
Անգլ. դեսպանը կը տեսնէ որ  
այդ պայմաններուն մէջ պատրիար-  
քին պատգամաւորները յաջողութեան  
խիստ քիչ յոյս կը ներշնչէին, ուստի  
իր կառավարութեանէն թոյլտուութիւն  
կրտանայ ուստի կանգնուի զորակցու-  
թեան մը: Գալով Ֆրանսայի, հա-  
կառակ նոյնիսկ իր Պոլսոյ դեսպա-  
նին ցոյց տուած տարօրինակ անհան-  
գատութեան ոչ մէկ նախաձեռնու-  
թիւն չէր ստանձներ և Մարքիզ տը  
Ղանտունէն ուստի կանգնուի զեսպանին  
թոյլտուութեամբ միայն Ֆրանսական  
հիւպատոսին գործակցութիւնը կառա-  
ջարկէ: Ծարին զիւրանագիտութիւնը  
ու է առարկութիւն ըրած շրջափոխով,  
Ֆրանսական կառավարութիւնը ամ-  
բողջովին կը նկատուի գործին յօժա-  
րակալութեամբ:

Սակայն Յէրիտ պէյ. Բերայի մար-  
զապանը, որ Պիթիւի կուսակալ  
անուանուած էր, մարտ 17-ին իր  
պաշտօնատեղին կը հասնի ու իր սու-  
տերով կը ջանայ քննարկել Պիթիւի  
անդիական հիւպատոսին արթնութիւ-  
նը:

Վրայ կը հասնին ապրիլի զէպերը.  
Ծէրիտ Մուշ կը փոխադրուի: Թէեւ  
այդ միջոցին յայտնի կ'ըլլայ որ ապս-  
տամբները չեն կրնար ընդունել պատ-  
րիարքական պատուիրակութեան միջ-  
նորդութիւնը որ ոչ մէկ երաշխաւո-  
րութիւն չէր ներկայացներ, այսու-  
հանգերիմ գոռօձ կատակերգութիւնը կը  
խաղցուի աղատօրէն, ու մինչդեռ  
ապրիլ 25-ին Եպարքոսը Օ'քոնօրի  
հետ տեսակցութեան մը միջոցին  
զարմանք կը յայտնէր անոր և Ռու-  
սիոյ դեսպանին ցոյց տուած երկր-  
նորուն համար, անդին Սասունի  
քնաջնջման գործը սկսած էր արդէն,  
ու կը շարունակուէր: Եպարքոսը միշտ  
կուրանար մայիս 24-ին, դեռ կու-  
րանար, թէեւ Կէլիէ-կիւզանը ջարդ-  
ուած և Տալուրի կը առնուած էր:

Յունիս 25-ին, ունկնդրութեան մը  
միջոցին Համիտ ալ կը սկսի ուրանալ.  
յոյս կը յայտնէ որ անգլ. դեսպանը  
սկսած չընծայեր եւրոպական մա-  
մուլին մէջ յոյս տեսնող սուտ տեղե-  
կութեանց. ինք դրական հրամաններ  
տուած է, որպէս զի անմեղ բնակչու-  
թեան շարիք չի հասցնեն:

Այս իրեն պատասխանեցի թէ Մու-  
շի մեր հիւպատոսին տեղեկագիրները  
անդի ունեցած իրականութեան մա-  
մին անկատար են, բայց 3000 փա-  
խտականներու ներկայութիւնը և  
5000 հայ տուներու քանդուած ան-  
բացատրելի էր. և ես կը վախնայի  
որ ծանր ու խժողով ծայրահեղու-  
թեանց նախապատրաստութիւնները  
կը թուէին անոնք:

Համիտ համաձայնեցաւ որ անմեղ  
ներսպանուած են բայց թէ այդ  
բոլոր չափազանցութիւններ էին:

Սենք զէպերէն շատ ետքը Սա-  
սունի ջարդերուն մասին տպուած տե-  
ղեկութիւնները մանրակրկիտ քննու-  
թեան մը անցնելով պիտի հաստա-

տենք թէ Սպիտակ Գիրքը այս իրո-  
զութեանց վրայ լիովին լոյս չի ար-  
ճեր, և դիւանագիտական մեթոտին  
համաձայն Օ'քոնօր, գնդապետ թի-  
րէլի գրութեանց վրայ հիմնուելով  
զարմանք կը յայտնէ որ հայոց պատ-  
րիարքը կարգ մը թերթիքու սպան-  
նուածներու թիւը 8-9000 ցոյց տու-  
ած է, մինչդեռ իր հիւպատոսը 900 կը  
հանէր այդ թիւը. կը զարմանայ նա.  
եւ որ պատրիարքը տեղի և թուականի  
ճշտութիւնը չի կրնար որոշել: Այս  
պակասը հիմայ ամբողջացած է սա-  
կայն, և այս էջերուն մէջ մեր հրա-  
տարակած վաւերացողները անշուշտ  
գոհացուցած են դեսպանին հետաքր-  
քրութիւնը:

(Շարունակելի)

ՏՊԱՌՈՒՌՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՊԱՐՍԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

(Շար. Աւստրիոյ քիւրի)

Դուժանը երկար ժամանակ լու-  
րաց յետոյ կրկին անդամ շարժել է,  
արդէն Պարսկաստան կայմակի արա-  
գութեամբ տարածել է լուրը, որ  
չուտով պէտք է զայն եւ անցնի իր  
մարդկանցով զէպի կրկիր, տեղա-  
յին պատրաստութիւններ են տես-  
նուած խորի ճանապարհելու համար.  
Ռմանք ձիեր են գնում, միւսները  
ազգամթերքի պատրաստութիւն են  
տեսնում, երրորդը մի այլ բանի.  
Այդ բոլորի մէջ կանանց խումբը կա-  
րելի է ասել, եթէ ուրիշները չան-  
չաւ, գոնէ յետ էլ չէ մնում. ինչ որ  
կարող են, ինչ որ իրենց սնունդն  
է պայմաններին միջոցները թոյլ են սա-  
լիս անում են: Թէպէտեւ գարուն է  
բայց քրտասանի լեռները դեռուս  
ծածկուած են ձիւնով. սառնամանի-  
քից տղաներին պաշտպանելու համար  
գործում են տաք գուլբաներ, պատ-  
րաստում են ճանապարհորդական պա-  
յուսակները. ջրի ամաններ, ծխա-  
խոտի քիտաներ, պէտք էր տեսնել  
թէ ինչ եւանդով, ողբերգութեամբ  
էին աշխատում, թողած ընտանեկան  
կարիքները, գիշեր-ցերեկ աշխատում  
են, մի կարծ ժամանակում պատ-  
րաստել այդ բոլորը են դրանց հետ  
միասին մի դրոշակ՝ ընծայ անցնող  
խմբին: Դրօշակի վրայ ամենամեծ  
ջանքն են գործ դնում կարելոյն չափ  
լինի գեղեցիկ, եւ արտայայտէ իս-  
կութեամբ այն, ինչ որ պահանջ-  
ուած է հայ հարարակութիւնից, ու  
մի քանի բառի միջոցաւ միայն կարելի  
լին քիւրիքացնել հայ հասարակու-  
թեան, այդ ստուպեալ եւ արեան  
ծովերում մկրտած ժողովրդի խըլը-  
տուններին, ըմբոստացումներն եւ կը-  
ռիւններին իսկական պատճառը, այդ  
քան արհաւիրքների իսկական զսպա-  
նակը: Դրօշակի մէկ երեսին նկար-  
ուած է Դանակցութեան վերանշար,  
որ նշանակում է «այնպատմութեան  
թեամբ, պրօպագանդով եւ զէնքով»  
պէտք է հասնենք մեր նպատակին:  
Ձինանշարի վերեւը «վրէժ, վրէժ»  
ներքեւի մասում գազատութիւն կամ  
մահ» միւս երեսին նկարուած է մի ա-  
մենի առիւծ, որի կատաղի հայեաց-  
քից արեան կաթիլներ են կտխւած,  
որը նայում է զէպի հետուն, սպա-  
տող թշնամուն, վերեւը գրուած է.  
«Մեզքը մերը չէ», անէ՞ք դուժմանին,  
նա պարզեց դրօշը արեւնոտ մար-  
տին»:

Յետեւը աւելացրած, «կանանց

«կանանց խմբից»  
Որքան իւրաքանչիւր եւ միւս  
նոյն ժամանակ հպարտացու-  
ցիլ է հայ Ֆէսայու համար, երբ իրենց  
քոյրերը անմիջական մասնակցու-  
թիւն են ցոյց տալիս այն շարժման.  
որով պէտք է ապահովել հայ հասա-  
րակութեան ապագան, այն յեղափո-  
խական գոռ հասնելին, որը վարա-  
կել է հայ ժողովրդի բոլոր գասա-  
կարգերը, յանուն իրենց դարաւոր  
բռնաբարւած մարդկային եւ ազգա-  
յին իրաւունքների, առանց որի մի  
ժողովրդի գոյութիւնը աւելորդ է  
աշխարհիս երեսին, վերաորական,  
նւաստացուցիչ, Հայուհիներին բուռն  
մասնակցութիւնը մի մեծ ապացոյց  
է, որ այդ սկզբունքը ընդհանրա-  
նում է. դառնում է մասսայի սե-  
փականութիւնը, մտնում է միջնեւ  
ժողովրդի ամենացած խաւերը: Պա-  
կաս իւրաքանչիւր չէր, եւ  
օրիորդներից մէկի յամառ թախան-  
ձանքը անպատճառ մասնակցել ար-  
չաւանքին: Այդ խմբի շնորհիւ է, որ  
որ աւեր բազմանում են կանանց եւ  
օրիորդների խմբերը: Պարսկաստանի  
ընկերներին պատիւ է բերում, որ  
չատ լաւ ուղղութեան վրայ են զբել  
իրենց գործունէութիւնը, այո, մի-  
այն այն ժամանակ կարելի է ապա-  
հովուած զգալ մի հասարակական շար-  
ժում, երբ մեր ժողովրդի բոլոր խա-  
ւերը զգացել են այդ շարժման ան-  
հրաժեշտութիւնը, երբ բոլորը ի մի-  
հոգի եղած, եւ կին եւ այլ մարդ,  
եւ փոքր ու մեծ բուն եւ անմիջա-  
կան մասնակցութիւն ունեն, երբ  
մէկ մէկու չեն խանգարում, այլ լը-  
րացնում, ամբողջացնում են շար-  
ժումը, այլ կերպ թոյլ կը լինի.  
անոյժ, երբ հասարակութեան մտա-  
ւորագիտական զուրան է մնում այդ  
շարժումից, այն էլ այնպիսի մի կէս  
ինչպէս կանայք, են, որոնք իրենց  
մի խօսքով, մի հայեացքով, եր-  
բեմն մի ժպտով նոյնիսկ վճռական  
ազդեցութիւն են ունենում երեսա-  
սարդների վրայ, եւ եթէ ցանկանան  
զէպի ոչ թէ միայն յեղափոխութիւն,  
այլ եւ զէպի դժոխք կարող են մղել  
մարդկանց, Պէտք է հայ կանանց մէջ  
էլ քաղաքացիական սկզբունքների գի-  
տակցութիւնը առաջ բերել որպէսզի  
նրանք կաթի հետ միասին ներշնչեն  
նոյն հասկացողութիւնները իրենց օր-  
դիներին, այնպէս, ինչպէս քիւրա-  
մայրերը օրօցից վրէժի, արեան  
հասկացողութիւնն են մտնում իրանց  
որդու մէջ օրօրոցային լէլէ-  
ներով, երգերով, հիպոն-  
զում՝ արեցնում են իրենց  
ունկնդրին ու նրա մէջ գարծնում  
արիւն, մտին այդ հասկացողու-  
թիւնները: Մեր քոյրերն էլ պէտք է  
օրօրոցից երգեն իրենց օրդիներին,  
որ մենք ստրուկ ենք, ստրուկ բա-  
ռի ամենախիստ նշանակութեամբ,  
որ վերաբորուած է մեր մարդկային  
եւ ազգային արժանապատուութիւնը,  
որ առանց վերականգնելու իւր իրա-  
ւունքները առանց աւեր դառնալու  
այն տեղերի, ինչ որ կորցրել ենք,  
ինչ որ խելի են մեղին, չը պէտք է  
մի րոպէ հանգիստ առնել կենցաղում.  
չը պէտք է մի րոպէ անգամ ուշադ-  
րութիւնը դարձնել զէպի մի այլ կող-  
մը, Հայոց աշխարհում երկար դարե-  
րից ի վեր այլեւս ջերմացուցիչ արե-  
գակ չը կայ Շատերը կարծում են  
թէ արեգակը այլեւս գոյութիւն ունե-  
նալ չէ կարող, ամէն բան վերջացած  
է. դա սխալ հասկացողութիւն է,  
թիւրիմացութիւն. հայի կարմիր

արեան գոլորշիները ծածկել են լեռ-  
ների գագաթները, արեւը բարձր է,  
սեպածեւ, ժայռոտը, սարերի բար-  
ձունքներում, պէտք է ջանք, դահու-  
ղութ. սողալով բարձրանալ զէպի վե-  
րեւ, անընդհատ զէպի առաջ, շա-  
տերը կէս ճանապարհից կը գլորեն  
զէպի անդունդը. այդ ոչինչ, փոյթ  
չէ վերջի վերջոյ մենք կը հասնենք,  
երբ նրան գտնելու կարիքը մեր մէջ  
միւս եւ արիւն դառնայ: Իսկ այդ  
բանին ամենամեծ շափով կը նպաս-  
տեն մեր քոյրերը: Արդէն սկսել են  
նոյն իսկ երեխայի տէր կանայք, ցան  
կուրիւն են յայտնում մանկ իսկա-  
կան գործի վայրը:

Միբելիք, արդէն անցել ենք ճանա-  
պարհի կէսը, արդէն ուղին բաւա-  
կանին հարթուել է, եւ հաւատացած  
եղէք, որ պէտք է հասնենք գագա-  
թին, պէտք է տեսնենք արեւի կեն-  
սատու ճառագայթները եւ պէտք է  
գոհութեամբ կրկնենք հաշակաօր  
բանաստեղծի յայտնի խօսքերը, Աս-  
գաւ են խրճիթները, ուր անմեղու-  
թիւնն է թագաւորուած:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՁԸ

Օկուսայի նատը

Հոկտեմբերի 6-ին (ն. տ.) կոմս Օ-  
կուսան մի ճառ արտասանեց Տօկիո-  
ում, որի մէջ յայտնեց, որ ճապոնա-  
կան ազգը պէտք է պատրաստուի եր-  
կար պատերազմի համար, որի տեսե-  
ղութեան շափը առաջուց նախատե-  
սել անհնարին է, բայց որը կը տեւէ  
գոնէ 2 տարի և 2 միլիարդ րուբլի  
ծախք կը պահանջէ: Ռուսաստանը,  
ասաց կոմսը, անազին միջոցներ ու-  
նի և այն առաւելութիւնը, որ նրա  
ազգաբնակչութեան թիւը սաստիկ մեծ  
է, Այդ պատճառով ճապոնեան պէտք  
է պատրաստուի ծանր զոհերի, եթէ  
կամենում է յաղթական դուրս գալ  
կուրից, Ռուսաստանի վրայ պատե-  
րազմը կը նստի 3 կամ 4 միլիարդ  
րուբլի Ռուսաստանում անհնարին է  
փոխառութիւն բաց թողնել կամ ա-  
ւելացնել հարկերը: Ճապոնեան ստիպա-  
ւած կը լինի հկող տարի փոխ առնել  
500 միլիոն իէն: Օկուսան յորդորում  
է ազգը պահել իր ոյժերը և խնայո-  
ղութիւնները և անյողող հաւաստի-  
ացումն է յայտնում վերջնական աջո-  
ղութեան մասին:

Ռուսաց նովոյի վրեմիա թերթը  
այս առիւթով արտաբերող է գրել,  
որի մէջ ի միջի այլոց ասում է. «Ռու-  
սաստանին շարժուեց մի անգամից ջար-  
դի ճապոնացիներին, Ընդհակառակը  
մի շարք լուրք անաջողութիւններով  
հաշակեց պատերազմի սկիզբը, որ  
այնքան խնամքով պատրաստել էին  
մեր հակառակորդները: Մենք մեզ  
զտանք երես առ երես իր յատկու-  
թիւններով մի առաջնակարգ բանակի  
և խիստ հզոր նաւատորմի: Պէտք ե-  
ղաւ 8 ամիս իր դժուարութիւններով  
բացառիկ մի արշաւանք մղել, որպէս  
զի կարողանայինք որոշել, թէ որքան  
մեծ վտանգ է ներկայացնում մեր  
«գաղթականական» թշնամին: Այժմ  
արդէն սկսում ենք կազմել այն հա-  
մոզումը, թէ այնպիսի թշնամու հետ,  
ինչպիսին ճապոնացիներն են, ամեն  
յոյս կիսաանապատութեան և կիսա-կոմպ-  
րովի մասին պէտք է թողնել, Պէտք  
է օգուտ քաղել պատերազմից միան-  
գամ որ նա սկսել է և այնպիսի ձե-  
ով ցոյց տալ ուսական զէնքի ոյժը,  
որ ամէն մի միտք նոր պատերազմի

ժամին ուսանողներ հետ բողոքովին թողնել ձապօնախոսում կամ մենք յետ կը մղենք ճապօնացիներին ցամաքից և դորանով կապացուցանենք նրանց, որ նոյնիսկ պատերազմի սկզբի բարեխաղող պայմաններում ցամաք դուրս գալը նրանց ոյթերից բարձր բան է, կամ մենք կը թողնենք նրանց, որ հաստատ կանգնեն ցամաքի վրայ և դորանով ձեռք կը բերենք մի ամենավաճառքը թշնամի մեր երկրի ամենահեռուստը մասում :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկ . 11 հոկտ.— Կառավարութիւնը զիջած է Սիմ. Փորօբոյի հայոց եկեղեցու հոգաբարձութեանը հայ վարժարանաց ազատօրէն կառավարութիւնը : Ասկէ կը հետեւցնեն թէ մօտ ժամանակի մէջ պիտի փոխուի այն որոշումը, ըստ որում հայ եկեղեցեաց կալուածները պետութեան կողմէ պիտի կառավարուէին :

—Վարչապետից հաղորդում են որ Ստէնլիում պահեստի զօրքի վարժութիւնները ժամանակ ըստ պան խրեց մի զինուորի, որը պատասխանեց նրան ապտակով : Սպան հանեց սուրը, բայց այդ ժամակակ միս զինուորները յարձակուեցին նորա վրայ : այդ միջոցին միջամտեց մի ենթասպայ, որի հետեւանքը եղաւ արիւնահեղ ընդհարում, որի մէջ երկու զինուոր սպանեց և 20 հոգի վիրաւորեցին :

—Օգեսայից հեռագրում են, որ այնտեղ բանուորները մէջ խռովութիւն է առաջ եկել : Ոստիկանութեան միջամտութեան ժամանակ սպանեց մի ոստիկան : Տեղի ունեցաւ բազմաթիւ ձերբակալութիւններ :

—Բելաստօկում մի բանուոր առմբ քցեց ոստիկանատան մէջ, առաջացաւ սարսափելի պայթում, որմբ քցողը սպանեաճ է : վիրաւորեաճ են 6 հոգի : Ոստիկանատունը և մօտի տները վնասուեցին :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսից հեռագրում են յՅայտոնին հոկտեմբեր 10ից . որ թրքական կառավարութեան կողմից նախկին միմիստը մարկիզ Ռուզիկի մաւաւոր միտիտով ուղարկեց Սուլթանի մօտ : Վալըրիտալական դեսպանը կը գնայ Հում : Երեկ ամբողջ օրը տեղի է ունեցել արտակարգ զինուորական խորհուրդ : Հարցերը և որոշումները խիստ գաղտնի են պահուում :

Նոյն լրագիրը հաղորդում է, որ Բասորի նոր վալի Միհրիզ փաշան Միւնտիֆիկի վալիի օգնական Համիտ փաշայի հետ մի

մեծ զինուորական արշաւանք են սկսել Վահաբիի և մի քանի բնիզոյի գէմ, որովհետեւ վերջինս մտածում է կեդրոնական Արաբիայում մի մեծ անկախ թագաւորութիւն հաստատել Քիրքիայի հաշիւն : Պոլսում հաւատում են, որ Անգլիան օգնում է նորան :

ՌՈՒՍՈ—ՃԱՐՈՆԱԿԱՆ Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ

Պատերազմող զօրքերի բնորոշումը

Կեօյ. Ցայս լրագրի թղթակից հետաքրքրական բնորոշումն է տալիս : ձապօնական զօրքը նա անւանում է . «լուկեաց զօրք» : Ռուսները ամէն մի զօրագնաթի մէջ երաժշտական խումբ ունին . բորչի կաթսայի շուրջը երեկոյան երգն է թնդում, Բայց ճապօնացիները . . ամբողջ արշաւանքի ընթացքում եւ երբէք ճակատի վրայ երաժշտութեան ձայն չլսեցի : Կուրսկիի բանակում պատերազմական ոչ մի երգ չեն երգում : Կայսերական զարդիայի նազախումբը գտնուում է միշտ գլխաւոր բանակատեղում և նոյնիսկ Ֆինիստանցիներ մօտ եղած հոշակաւոր թաղումները ժամանակ միայն սրինգի ձայն լսուում : ձապօնացի զինուորի ամենօրեայ կեանքի մէջ երաժշտութիւնը ոչ մի դեր չէ խաղում : Յաղթութեան ժամանակ ճապօնական ռզեւորութիւնը արտայայտուում է միայն «բանդայ» աղաղակներով, որոնցով նրանք յարձակում են գործում : Չկայ մի ուրիշ զօրք, որտեղ այնքան քիչ մտածէին զարնուութիւնների և ժամանցների մասին : Ամենամօտիկ խանութը, ուր կարելի է գնել մի շէշ գարնշուր կամ օղի, մեզաւից 80 կիլօմէտր տեղ հեռու է : ձաշարաններ, ուր կարելի է գնի գտնել, և սրճարաններ, ուր եհզուհիներ լինեն, բոլորովին բացակայ են : Թէյ, սիգար և հովար, ահա այն շքուայլութիւնը, որ թոյլ է տալիս իրան ճարտարի գօնուրը, նա բաւականանում է ձկնորսութեամ, նամակներ գրելով և լրագրներ կարդալով, Իբրեւ յիշատակ հայրենիքի իւրաքանչիւրը եր պայտուակի մէջ ունի ձկնորսութեան ցանց, Գինեղայ կուրօկիից մինչեւ վերջին կուրսն ամենը ձկնորսութեան սիրահար են : Պէտք է միջել նաեւ ճապօնացի զինուորի քաղաքավարութեան և շիտակութեան մասին : Բանակում գտնող պատերազմական թղթակիցները թողնում են հանդարտութեամբ իրենց իրերը բանակատեղում, երբէք չվախենալով նրանց ամբողջութեան մասին : Ոչ մի բան չէ կորչում, նոյնիսկ ծխախոտը և պաշարեղէնը :

Ռուսներու մի նոր պաշարագումարիւնը

Պալթիկի նաւատորմիցը վերջապէս դուրս եկաւ, և իւր գուրս գալը հաշակեցաւ ամբողջ աշխարհի մէջ ուսններու յատուկ մի նոր պաշարագումարութեամբ :

Անգլիական ջրերէն անցած միջոցին ուժբակօծեր է անգլիական քանի մը ձկնորսներու նաւակները, որոնցմէ քանի մը հասարակութեան թրակալութիւնը :

ուով մարդիկ ծագածոյն են եղեր : Ռուսներու այս պաշարագումարութիւնը մեծ յուզում յաւաջ բերեր է Անգլիոյ ժողովրդին և կառավարութեան մէջ :

Լոսգիրները այս բարբարոսական քայլը կը վերագրեն վախի հետեւանք, որովհետեւ նաւատորմը դեռ Պալթիկէն դուրս չելած, յարձակում մը կայսուէր ճարտարացոց կողմանէ :

Կըսուի թէ Բեթերսպուրկէն մի մեծ իշխան պիտի ուղարկուի ի Լոնտոն : Անգլիոյ կառավարութեան այս անհաճօյ գէպքի մասին ներողութիւն խնդրելու համար :

Սթանտորտի թղթակիցը Քուրօբի բանակատեղէն կը հեռագրէ :

Ամսոյս 18ին ուսուական վաշտ մը Խայցեհօյէ անցած ըլլալով, ճարտարիք հասան անոր ետեւէն և գրեթէ ամբողջովին փճացուցին զայն արգահատուած թնդանօթներով :

—Չօրավար Օքուի բանակատեղէն եկող լուրերուն նայելով, ամսոյս 18ին հինգ վաշտէ երեք հրետանիէ բաղկացած ճարտանական շոկատ մը, որ թշնամին հալածած ատեն չուփփանց յառաջացած էր, երկաթուղիին արեւելեան կողմը, յարձակում կրեց ուսուական 12 վաշտերու կողմէ և ութ թնդանօթ կորսնցուց :

— Լոնտոն .— Ինքիօյէն կը հեռագրուի թէ մարշալ Օեամա հեռագրած է Միքատոյին թէ Մուքատէնի հարաւային կողմը, ուսուական և ճարտանական բանակներն ընդհանուր կացութեան նայելով կը յուսայ Մուքատէն մտնել մինչեւ 8 օր : Անկատար կը նկատէ այն քանի մը առաւելութիւնները զորս աուսերը իրենց փոխադարձ յարձակումներուն կը պարտին և կը յայտարարէ թէ այս թեթեւ ընդհարումներուն արգելքը բընաւ չեն կրնար փոխել հոկ. 9էն ի վեր մղուած ճակատամարտերուն ընդհանուր ելքը, որոնց մէջ ճարտանական բանակը յարատեւ յաղթական հանգիստացաւ : ձառնական բանակին կատարած գործողութիւնները նպաստաւոր կերպով կը շարունակուին, և շարունակ օգնական օյժեր կը հասնէն իրեն :

— Լոնտոն .— Թայմզի Մանչուրիոյ թղթակիցը կը հեռագրէ թէ ամենէն վերջին ճակատամարտերուն մէջ ուսներուն կրած կորուստը 25000 հոգի կը հաշուէ իսկ ճարտարացոցը միայն 3000 :

— Տէլի թէլէկրաֆ կը ծանուցանէ թէ Բեթերսպուրկէն մասնաւոր աղբիւրէ բլիտոյ հետեւեալ լուրերը ստացած է : Մանչուրիոյ ուսուական բանակին ապագայութիւնը սպասուի է եղեր և խուռն մը :

աւհոգութիւն մը սկսեր է տիրել Բեթերսպուրկի մէջ : Վիրաւորներ շատ բազմաթիւ են ու անոնցմէ մեծ մասը կը մեռնին ուղեւորաշարուն մօտ գտնուող բըժիշկներու անբաւականութեան պատճառաւ :

— Բարիկ .— Բարիկի ճարտանական դեսպանատունը կը հերքէ այն լուրը թէ, ճարտանական բանակէն երկու զօրաբաժիններ, 12000 հոգիէ բաղկացած, իբր թէ գերի բռնուած ըլլան ուսներէն :

— Լոնտոն 21 հոկտ .— Թօքիօյէն կը հեռագրեն թէ ճարտանական 90 փոխադրանաւեր Սաղեհօյի նաւահանգիստէն մեկնեցաւ զօրքերով ու ապագայութիւնը յոյսով, պատերազմոյ բանակին համար :

Այս փոխադրանաւերը մարտի շալ Օեամայի կը տանին 75.000 զօրք 200 թնդանօթներ և մեծաքանակ ապագայութիւնը . ճարտանական բանակին ուժը այսպէս պիտի հասնի 400.000 հոգի ու 1000 թնդանօթի :

— Լոնտոն 10 հոկտ .— Բեթերսպուրկէն յՏէլի թէլէկրաֆիւն կը հեռագրեն թէ Քուրաթիի տուած տեղեկութեան համեմատ, Մահօյի մօտ եղած կուրսի մէջ ուսները ունեցած են 12000 ճաւալ և 55860 վիրաւորաւորներ :

— Լոնտոն 10 հոկտ .— Թօքիօյէն կը հեռագրեն թէ, մարշալ Օեամային տուած տեղեկութեանց համեմատ, երեկ ճարտանական բանակին վիճակը անփոփոխելի էր : վերջինները յաջողած են ուսներէն 43 թնդանօթներ աւարել :

— Բեթերսպուրկ 10 հոկտ .— Խարայիէն ուս հեռագր. գործակալութեան կիմացնեն, թէ մարտ ամսի 23էն մինչեւ այսօր ուսները չէպի հիւսիս փոխարած են 28000 հոգի վիրաւորաւորներ :

— Հոնոլմ 10 հոկտ .— Տեղոյս ճարտանական դեսպանը կիմացնէ թէ 4 օրէ ի վեր պատերազմը դադարած է, միանգամայն կը հերքէ Նիւ-Յօրք Հերալտին տրուած այն լուրը թէ «կէնէրալ Քուրօբին հրահրէ » :

Լոնտ .— Օյաման կը տեղեկագրէ ճարտանական սպայակոյտէն, թէ Մահօի մօտ տեղի ունեցած կուրսի մէջ ուսները կորսնցուցած են 50000 մեռեալ և վիրաւորաւոր, 1550 գերի, 45 թնդանօթ, 6920 կրանութներ, 5774 հրացան և մեծ քանակութեամբ վառօղ :

Թօքիօյ 12 հոկտ .— Օյամա կիմացնէ թէ, միայն Հունհօ գետին եղերքը գտնուած են 13333 ուս մեռեալներ :

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница «Взаимность» Варна